

Բանալի բառեր՝ տարեց մարդիկ, ծերացող հասարակություն, ավանդական ընտանիք, սոցիալական ակտիվություն, հասարակություն, սերունդ:

ՔՏԴ 316

ՏԱՐԵՑ ՄԱՐԴԻԿ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈՒԶՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հռիփսիմե ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

*Խ.Աթոլյանի անվան
ՀՊՄՀ-ի կրթության հոգեբանության և
սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոս*

Հասարակության ծերացման հարցը դժվարագույն սոցիալական խնդիր է, որն այսօր հուզում է աշխարհի գրեթե բոլոր պետություններին, այդ թվում նաև Հայաստանին: Հայ հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման գործընթացներում Հայաստանի Հանրապետության բնակչության կազմում եղած տարեց մարդկանց տեսակարար կշիռը լրջորեն ազդում է տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և բարոյական փոփոխությունների վրա:

Աշխատանքային, այդ թվում՝ վերարտադրողական տարիքի բնակչության հոսքն արտերկրի հանգեցնում է նրան, որ երկրում հիմնականում մնում են տարեցները, որոնց թվաքանակն ավելանում է բնակչության ընդհանուր թվի հարաբերակցությամբ: Ավելին, առաջանում է գործազրկության խնդիր. սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում էլ ավելի է մեծանում մարդկանց հիվանդացության, ինչպես նաև մահացության աստիճանը:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, ծնելիության անկումն ու միգրացիայի բարձր տեմպերը հանգեցրել են նրան, որ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, 63 տարեկան և բարձր տարիքի մարդկանց թիվը կազմում է մշտական բնակչության ընդհանուր թվի 12.9%-ը (387 659 մարդ): 65 տարին լրացած անձանց թիվը կազմում է 323 100 կամ բնակչության ընդհանուր թվի 10.8%-ը:

Բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների թվի ավելացման միտում է նկատվում: Այսպես, 2011թ. դրությամբ, ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում 63 և բարձր տարիքի անձանց թիվը կազմել է 11,5 % (376 100 մարդ): Տարեցների թվաքանակի աճը բնակչության ընդհանուր թվաքանակում վերջին 5 տարվա ընթացքում կազմել է 1,4 % կամ 11559 մարդ:

Հայաստանը հայտնվել է ծերացող հասարակությունների վերին շեմին, իսկ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կանխատեսումները վկայում են, որ Հայաստանը շուտով կհաստի այդ շեմը: Ըստ կանխատեսումների, 2050թ. 65-ից բարձր տարիք ունեցողները կկազմեն բնակչության 22-23%-ը:

Կյանքի միջին տևողությունը Հայաստանի Հանրապետությունում կազմում է 74,8 տարի (կանանց համար՝ 77,9 տարի, տղամարդկանց՝ 71,5 տարի), վերջին երկու տարվա ընթացքում կյանքի միջին տևողությունը աճել է 0.5-ով:

Համաձայն վիճակագրության, աղքատության մակարդակը Հայաստանում կազմում է շուրջ 30%, 60-64 տարեկանների շրջանում՝ 24%, իսկ 65 և բարձր տարիք ունեցող անձանց շրջանում՝ 32%:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, հաշվառված է 47 276 կենսաթոշակառու, որից ընտանեկան նպաստ է ստանում 35 867-ը, կամ՝ տարեցների ընդհանուր թվի 9.2%¹:

Ծերացման բարձր ցուցանիշը մեր երկրում բացատրվում է ոչ միայն նրանով, որ աշխատատեղերի բացակայության հետևանքով երիտասարդ տարիքի անձինք հեռանում են հանրապետությունից և աշխատանք են որոնում այլ երկրներում, այլ նաև Հայաստանի բնակչության կյանքի միջին տևողության ավելացմամբ:

Տարեց մարդու համար շատ կարևոր է այն հանգամանքը, թե նա ինչ կարգավիճակում է գտնվում ավանդական ընտանիքում: Չավակների հետ համատեղ կյանքն ու ազգականների օգնությունն Էական դեր ունեն ավագ սերնդի կենսագործունեության ապահովման գործում: Ընտանիքի օգնությունը թույլ է տալիս տարեցներին հաղթահարել կենսաթոշակի անցելուց հետո տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները: Տարեց մարդկանց մասնակցությունն ընտանիքում տնտեսական-կենցաղային և մատաղ սերնդի դաստիարակչական գործառնություններին, ավելի են բարձրացնում նրանց հեղինակությունը: Ավանդական ընտանիքում կարևոր է նրա անդամների միջև եղած բարիդրացիական հարաբերությունները, որը միշտ կբարձրացնի տարեց մարդկանց շփման հնարավորությունը և կթեթևացնի նրանց մտա մենակության գաղափարը:

Տարեց հասակում լիարժեք ապրելու համար շատ կարևոր է ընտանիքի վերաբերմունքը, որպեսզի նա իրեն օտարացած չգգա: Տարեց մարդը պետք է զբաղված լինի աշխատանքով, որը մեր երկրում շատ լուրջ խնդիր է, քանի որ մեզ մոտ աշխատաշուկայում առկա է տարիքային խտրականությունը: Հանրապետության բնակչության ավագ սերնդի զբաղվածության

¹ http://www.mlsa.am/forum/files/conf_files/900_caracm.razm.naxagic.doc

Խնդիրն առավել սրությամբ է կանգնած հանրապետության աշխատաշուկայում աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև եղած անհամամասնության պատճառով:

Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության գլխավոր նպատակն է միասնական և համակարգված քաղաքականության մշակման արդյունքում ստեղծել հավասար հնարավորություններ հասարակության բոլոր տարիքի մարդկանց համար և կյանքի արժանապատիվ պայմաններ տարեց մարդկանց համար: Բնակչության սոցիալական պաշտպանության քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է տարեցների կյանքի որակի բարելավումը, ինչն աստիճանաբար մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կիզակետում²: Չնայած իրականացվող բազմաթիվ ծրագրերին, մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ տարեցների համար լիարժեք և արժանավայել կյանք ապահովելու համար անհրաժեշտ են մի շարք գործոններ: Դրանցից են

- անհրաժեշտ է զարգացնել տարեց մարդկանց կյանքի որակի բարելավմանն ուղղված սոցիալական և առողջապահական ծառայությունների համակարգը, ինչպես նաև աշխատանքի ու զբաղվածության ոլորտում տարիքային հատկանիշներով պայմանավորված խտրականության բացառումը,

- տարեցների՝ հասարակական կյանքին և քաղաքացիական հասարակության զարգացման գործում ակտիվ մասնակցության խրախուսումը,

- Նյութական և բնակարանային ապահովություն, հարմարավետ տրանսպորտ և այլն:

Տարեց մարդկանց համար կարևոր հանգամանք է հասարակական կյանքին նրանց ակտիվ մասնակցությունը:

Այսպես՝ փորձագիտական հարցման վերլուծությունը միաժամանակ ցույց է տալիս, որ աշխատանքից զրկվելուց հետո, նոր աշխատանք գտնելու հավանականությունն ավելի մեծ է տղամարդկանց մոտ, նրանց քիչ թե շատ հաջողվում է ցածր վարձատրվող աշխատանք գտնել, որը կանանց գրեթե չի հաջողվում:

Ըստ հասարակական և պետական սեկտորի փորձագետների, տարեցը պետք է ապրի իրեն հարազատ միջավայրում, բացի այդ, նրա լիարժեք ապրելու համար շատ կարևոր է, որ նա ֆինանսական անկախություն ունենա, որը հնարավորություն կտա նրան լինելու սոցիալապես ավելի ակտիվ: Եթե որոշ փորձագետներ տարեցի լիարժեք ապրելու համար առանձնացնում են հոգեբանական գործոնը՝ ընտանիքի և հասարակության անդամների վերաբերմունքը, որ տարեցն իրեն օտարացած չզգա, ապա շատ փորձագետներ գտնում են, որ տարեց մարդը շփման հնարավորություն պետք է ունենա, այսինքն՝ զբաղված լինի աշխատանքով, որը մեր երկրում շատ լուրջ խնդիր է, քանի որ մեզ մոտ առկա է տարիքային խտրականությունը: Եվ ընդհանրապես տարեցների ներուժն ու կարողությունները չեն օգտագործվում:

Փորձագետների կողմից շատ կարևորվում է նաև տարեցների կյանքի որակի բարելավման խնդիրը, որից էլ կախված է նրանց սոցիալական ակտիվությունը: Այստեղ փորձագետները նկատի ունեն ոչ միայն տարեց մարդուն շրջապատող հարազատների և բարեկամների դերը, այլ նաև ընտանիքներում տարեցների ինամբին ուղղված ավանդույթների պահպանումը, որոնք էլ հնարավոր են դարձնում պատկերացում կազմելու տարեցների կյանքի երջանիկ ժամանակահատվածի մասին: Դա մասնավորապես հնարավոր է դառնում այն դեպքում, երբ տարեցները մշտապես շրջապատված են լինում երեխաներով, թոռներով ու թոռնուհիներով, բարեկամներով ու հարազատներով³:

Խնդիրն նման լուծումը հնարավորություն է տալիս, որպեսզի տարեց մարդիկ, համաձայն պահպանվող ընտանեկան ավանդույթների, ապրեն ընտանիքում՝ շրջապատված իրենց հարազատներով:

Հաշվի առնելով հայ հասարակությունում պահպանվող գեղեցիկ ավանդույթներն ու սովորույթները՝ տարեցների կյանքի տևողությունը երկարացնելու և երջանիկ ապրելակերպ ապահովելու համար, պետությունը պետք է իրականացնի այնպիսի սոցիալական քաղաքականություն, որն ուղղված կլինի ոչ թե տուն-ինտերնատներում տեղերի ավելացմանը, այլ տարեց անդամ ունեցող ընտանիքներին օգնության տրամադրմանը՝ ընդհուպ որոշակի միջոցների առանձնացում և արտոնությունների տրամադրում տարեց մարդկանց ընտանեկան խնամքի խթանման համար⁴:

Ելնելով պրոֆեսոր Յու. Գասպարյանի առաջարկներից և մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտության արդյունքներից, պետք է նշել, որ ՀՀ կառավարության կողմից սոցիալական քաղաքականության մեջ բարեփոխումներ իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այն դերերի փոփոխությունները որոնք տեղի են ունենում այն ընտանիքներում, որտեղ ապրում են տարեցները: Այսպես, անցնելով կենսաթոշակի և չունենալով աշխատանք, կանայք՝ որպես տնային տնտեսուհու դերի կրողուստ չեն ունենում, իսկ տղամարդը ունենում է այդ կրողուստը եւ արդյունքում չեն կարողանում ֆինանսապես ապահովել ընտանիքին և, ապրելով ընտանիքում, ավելի շատ է միայնակության հակվածությունը: Տարեցների օրերը գրեթե միապաղաղ են անցնում, բացառությամբ որոշ իրադարձությունների, որոնք տեղի են ունենում նրանց կյանքում: Կանանց մեծամասնությունը հիմնականում տան հոգսերը վերցնում են իրենց վրա՝ տան գործեր, թոռների դաստիարակություն, ուղեկցում են դպրոց, մանկապարտեզ, խմբակներ ու իրենց ավելի հոգեհարազատ են զգում եւ առավել ակտիվ են, իսկ տղամարդկանց մեծ մասը իրենց օրն անց են կացնում տանը՝ հեռուստացույց դիտելով և թերթեր կարդալով:

«Ներկայումս տարեցների կարգավիճակի փոփոխությունը ընտանիքներում,- նշում է պրոֆեսոր Ն. Վասիլենկո,- շատ դեպքերում որոշվում է աշխարհում տեղի ունեցող փոփոխություններով: Ժամանակակից պայմաններում, ավագ սերնդի կուտակած փորձը չունի նախկին գործնական կարևորությունը: Առավել կրթված երիտասարդներն այլ կերպ են նայում ավագ սերնդին՝ չցուցաբերելով նախկին հարգանքը: Սակայն ավագների նկատմամբ ուշադրությունը, ընտանիքում փոխադարձ հարգանքը, առաջին հերթին որոշվում են ընտանիքի անդամների ընդհանուր մշակույթով, այն միջավայրով, որը ձևավորվում է հասարակության մեջ նրա գործառնման տարբեր փուլերում»⁵:

² https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/08/qax31-14.pdf

³ Գասպարյան Յու. Ա. , Ժողովրդական ավանդույթներն ու սովորույթները հայ ընտանիքում: Երևան, 2003, էջ 114

⁴ Գասպարյան Յու.Ա. , Семья и церковь как единая система регуляции народных традиций и обычаев, Санкт-Петербург, 2002, 135 с.

⁵ Василенко Н.Ю. , Социальная геронтология, Владивосток, 2003, с. 48.

Մեր երկրում տարեցների ակտիվության, նրանց կյանքի որակի, առողջական վիճակի վրա ազդող գործոն է նաև այն հանգամանքը, որ նրանց զավակները բնակվում են արտերկրում: Եվ չնայած նրան, որ տարեցների զավակները ցուցաբերում են ֆինանսական օգնություն, բայց նրանք հաշվի չեն առնում, որ իրենց ծնողները կարիք ունեն հարազատների հետ շփման: Քիչ չեն դեպքեր, երբ արտերկրում գտնվող զավակները ոչ միայն ֆինանսապես չեն օգնում ծնողներին, այլև չեն շփվում նրանց հետ, այս դեպքում տվյալ տարեցների վիճակը ծայրահեղ ծանր է լինում, քանի որ նրանք պետությունից էլ օգնություն չեն կարող ակնկալել:

Իհարկե՝ առողջական խնդիրները չեն կարող չանդրադառնալ տարեցների ապրելակերպի վրա: Հարցմանը մասնակցած փորձագետների մեծ մասը նշում են, որ առողջական վիճակն ուղղակիորեն անդրադառնում է տարեց մարդու սոցիալական ակտիվության, հասարակական կյանքում նրա ակտիվ մասնակցության վրա, սակայն նպատակային օգտագործելով առողջական խնդիրներ ունեցող տարեց մարդու ունակություններն ու ներուժը, կարելի է ակտիվացնել նրան: Ուստի՝ այդ առումով պետական քաղաքականության մեջ էլ փոփոխություններ պետք է իրականացվեն, որպեսզի առողջապահական ոլորտը հատու լինի տարեցին, եւ արդյունքում առողջ ապրելակերպի գաղափարը խրախուսվի: Միաժամանակ՝ տնային սպասարկման միջոցով էլ է հնարավոր տարեց մարդու ներուժը օգտագործել և ակտիվացնել նրան:

Ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ եթե տարեց մարդիկ հասարակական, մշակութային կյանքի լիարժեք մասնակից են, իսկ առողջական խնդիրները խոչընդոտ չեն նրանց համար, ապա մեզ մոտ տարեցները վերոնշյալի ակտիվ մասնակից չեն, եւ շատերը մատնանշում են, որ շատ կուզենային գնալ երիտասարդ տարիներին այցելած վայրերը՝ թատրոն, համերգ, պատմաճարտարապետական վայրեր և այլն, սակայն միջոցներ և հնարավորություններ չունեն:

Ըստ փորձագետների, մեր երկրում տարեցները սոցիալապես ակտիվ չեն, հիմնականում ակտիվ են իրենց ընտանիքներում, սակայն գոյություն ունեն բազմաթիվ խոչընդոտներ, որոնք ուղղակիորեն ազդում են ակտիվացման վրա՝ առողջական խնդիրները, ցածր կենսաթոշակը, հարմարավետ տրանսպորտը, բնակարանային պայմանները, ծառայությունների բարձր սակագները և այլն: Փորձագետները նշում են, որ հիմնականում տարեցների ակտիվությունն իր արտահայտությունն է գտնում ՀՀ-ներում, որտեղ կազմակերպվում են էքսկուրսիաներ, տարբեր խմբակներ են գործում, տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպվում, սակայն այնտեղ ընդգրկված տարեցները քիչ տոկոս են կազմում, իսկ այդ բոլորը պետք է պետական մակարդակով իրականացվի՝ մարզերում և համայնքներում: Փորձագետները շատ են կարևորում սոցիալական աշխատողի դերը տարեցների հետ աշխատանքում, սակայն մեր երկրում տարեցներից շատերը տեղեկացված չեն սոցիալական աշխատող մասնագետի մասին:

Փորձագիտական հարցման վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ հասարակական կազմակերպությունների, և՛ պետական կառույցների փորձագետների մեծ մասը այն կարծիքին է, որ կյանքի որակը տարեցների մոտ մեղմ ասած՝ բարվոք չէ, պատճառներից առանձնացնում են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հասարակության վերաբերմունքը տարեցների նկատմամբ, նրանց դերի փոփոխությունը ընտանիքներում՝ տարեցներն այլևս չեն ընկալվում որպես հարուստ փորձի կրող և փոխանցող, ինչպես դա նախկինում էր: Պետք է նշել նաև այն իրողությունը, որ սոցիալական կենսամակարդակը ցածր է, քանի որ մեր երկրում կենսաթոշակները շատ ցածր են, նույնիսկ այն դեպքում, երբ տարեցը ստանում է նաև նպաստ:

Ըստ որոշ փորձագետների, տարեցների կյանքի որակի բարելավման ուղղությամբ համակարգված ոչինչ չի արվում, իհարկե՝ որոշ ծրագրեր իրականացվում են սոցիալական պաշտպանության ուղղությամբ՝ ինամբի, առողջապահական ծառայություններ, գոյություն ունեն տուն-խնամք տաներ, ցերեկային խնամքի կենտրոններ, տնային սպասարկման ծառայություն, փորձում են քայլեր ձեռնարկել սպասարկման որակի բարելավման ուղղությամբ, սակայն այդ բոլոր կենտրոնները մեծամասամբ կենտրոնացված են Երևան քաղաքում՝ այն էլ ոչ բոլոր համայնքներում, իսկ մարզային մակարդակով գրեթե ոչինչ չի արվում:

Ըստ փորձագետների կարծիքների, հաճախ են մշակվում համապատասխան օրենքներ, սակայն դրանք կյանքի կոչելու սխալ վարչարարություն կա, իսկ սոցիալական ակտիվության խրախուսման համար նպատակային ոչինչ չի արվում: Նույն փորձագետները նշում են նաև հասարակության վերաբերմունքը տարեցների հանդեպ, որի փոփոխման համար անհրաժեշտ է, որպեսզի մշտապես ընտանիքներում ձեռնարկվի միջտերմային կապերն ամրապնդող միջոցներ:

Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Միջտերմային հարաբերությունների բնույթն անփոփոխ չի մնում: Հատկապես՝ եական փոփոխություններ են տեղի ունեցել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսերին»⁶:

Այսօր հայ հասարակությունում գործող ավանդույթներն ու սովորույթները ընտանիքներում, ինչպես նաև ժողովրդագրական վիճակը վկայում է այն մասին, որ ներկայումս մեզ մոտ արդիական է դառնում տարեցների սոցիալական ակտիվության հարցը: Կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ տարեցների սոցիալական ակտիվությունը մեծապես կախված է երկրի սոցիալ-տնտեսական վիճակից, նրանց առողջական վիճակից, հասարակական կարծիքից, նրանում առկա կարծրատիպերից, սոցիալական միջավայրից և իհարկե՝ սոցիալական աշխատողների մասնագիտական որակավորումից:

Տարեց հասակում սոցիալական ակտիվությունն առաջին հերթին դրսևորվում է կենսագործունեության չորս հիմնական ոլորտներում՝ աշխատանքային, հասարակական, սոցիալ-մշակութային և ընտանեկան-կենցաղային:

Տարեցների համար առավել սուր են դրված հետևյալ խնդիրները՝ ցածր եկամուտ, առողջապահական ծառայությունների բարձր վճարներ և կոմունալ ծախսեր:

Անհրաժեշտ է նշել, որ այն տարեցները, ովքեր աշխատանք ունեն, առավել ակտիվ կյանքով են ապրում, ավելի կայուն են և իրենց ավելի երջանիկ են զգում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տարեցների աշխատանքային զբաղվածությունը կախված է առողջական վիճակից, տարիքից և կրթական մակարդակից: Հարցմանը մասնակցած աշխատող կենսաթոշակառուների շատ քիչ մասն է պահպանել նախկին աշխատատեղը, մնացածը ստիպված են եղել փոխել աշխատանքի բնույթն ու վայրը, հատկապես՝ նրանց համար աշխատանքային զբաղվածության տեսակ է նաև հողագործությունը:

⁶ Артамонова Е. И. и др. , Психология семейных отношений с основами семейного консультирования. М., 2011 с. 108-109.

Տարեց մարդը կարիք ունի ինքնարտահայտվելու, ինքնիրացվելու, եւ այստեղ անհրաժեշտ է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով ամեն մարդու անհատական, հոգեբանական առանձնահատկությունները: Ուստի՝ անհրաժեշտ է ստեղծել տարեցների համար նախատեսված կենտրոններ, որը հագեցած կլինի անհրաժեշտ նորագույն սարքավորումներով, տեխնիկական միջոցներով եւ ինտերնետով: Այս ամենը կնպաստի տարեցների հնարավորությունների և գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև նորանոր ոլորտներում նրանց դրսևորմանը: Նորագույն տեխնոլոգիաների իմացությունը հնարավորություն կտա ձեւավորել նոր ծանոթություններ, շփվել օտարազգի իրենց հասակակիցների հետ, ծանոթանալ նրանց մշակույթին, իսկ իրենց հերթին նրանք կարող են սեփական մշակույթն ու սովորույթները ներկայացնել հարիւր ձեւով: Այս ամենը կնպաստի տարեցների սոցիալ-մշակութային ակտիվացմանը:

Միաժամանակ՝ տարեցներին հասարակական աշխատանքներին ընդգրկումը կկոմպենսացնի նրանց մասնագիտական գործունեության բացը: Կամավոր գործունեությունը նպաստում է, որպեսզի տարեցները միայնակության զգացումից ձերբազատվեն և օգտակար լինեն հարազատներին: Շատ կարևոր է, որ տարեցներն իրենք ցանկանան մասնակցել այդ աշխատանքներին, առանց որևէ մեկի օգնության: Մեր երկրում կամավորության ինստիտուտը զարգացած չէ, այս ուղղությամբ պետք է աշխատանքներ տանեն թե՛ պետական կառույցները, թե՛ հասարակական կազմակերպությունները, ինչի համար անհրաժեշտ է մասնագիտական օգնություն նրանց, ովքեր զարգացնում են տվյալ ոլորտը, և նպաստում են տեղեկատվության տարածմանը: Պետք է բացել նաև տարեցների կամավորական կենտրոններ, իսկ դրանց գործունեության մասնակիցներին էլ խրախուսել պարգևավճարներով:

Այսօր ՀՀ-ում այս ոլորտում առավել նշանակալի են հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող տարեցներին ուղղված ծրագրերը, որոնց համահունչ էլ տարեցների համար պետք է կազմակերպվեն տարբեր միջոցառումներ, նրանց խնդիրներին ցուցաբերել անհրաժեշտ համալիր մոտեցում: Պետությունը պետք է ունենա համընդհանուր մոտեցում տարեցների հիմնախնդիրների կարգավորման նկատմամբ, հակառակ պարագայում միայն քիչ թվով հասարակական կազմակերպություններով հնարավոր չէ հասնել արդյունավետ արդյունքների:

Օգտագործված գրականություն

1. Գասպարյան Յու.Ա., Ժողովրդական ավանդույթներն ու սովորույթները հայ ընտանիքում: Երևան, 2003, 172 էջ
2. Артамонова Е.И. и др., Психология семейных отношений с основами семейного консультирования, М., 2011, 192с.
3. Василенко Н.Ю. , Социальная геронтология, Владивосток: Изд. Дальневосточного университета, 2003, 140 с.
4. Гаспарян Ю.А., Семья и церковь как единая система регуляции народных традиций и обычаев, Санкт-Петербург, 2002, 135 с.
6. http://www.mlsa.am/forum/files/conf_files/900_caracm.razm.naxagic.doc
7. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/08/qax31-14.pdf

Ներկայացվել է 14.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.